

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում գտնվող Ուկրաինայի Արտաքին գործերի փոխնախարար Կոնստանտին Ելիսեևին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանի և Ուկրաինայի հարաբերությունների սերտացման և երկու ժողովուրդների միջև առկա բարեկամության առավել ամրապնդման համար և շնորհավորեց երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 90-ամյակի առիթով: Նորին Սրբությունը ի դեմս փոխնախարարի նաև իր գնահատանքը հայտնեց Ուկրաինայի իշխանություններին և ժողովրդին՝ Ուկրաինայի հայ համայնքի և Ուկրաինայի հայոց թեմի նկատմամբ դրսևորվող բարյացակամ և հոգատար վերաբերմունքի համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Միջազգային իրողություններ և հարաբերություններ» ֆրանսիական կազմակերպության անդամներին՝ գլխավորությամբ կազմակերպության նախագահ Ժան Միշել Ֆովի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը, գոհունակություն հայտնելով երկու ժողովուրդների միջև առկա առանձնահատուկ ջերմ հարաբերությունների առի-

թով, իր գնահատանքը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին ու ժողովրդին՝ հայ ժողովրդին և հայոց պետությանը ցուցաբերվող աջակցության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը բերվող զորակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև տարածաշրջանում առկա խնդիրներին, ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին և Հայաստանի ներքաղաքական կյանքին: Խոսվեց նաև միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերությունների մասին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻՆ

Ապրիլի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց աշխարհահռչակ կոմպոզիտոր և դիրիժոր Քշիշտոֆ Պենդերեցկուն:

Ողջունելով կոմպոզիտորի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունն իր խոսքում նշեց. «*Ձեր գործերին ծանոթ ենք և այսօր ուրախ ենք անձնապես ճանաչելու և բերելու Ձեզ Մեր գնահատանքը այն ծառայության համար, որ մատուցում եք ողջ մարդկությանը*»:

Իր հերթին Քշիշտոֆ Պենդերեցկին Նորին Սրբությանը ներկայացրեց իր ընտանիքի պատմությունը՝ անդրադառնալով հայկական արմատներին և մանկության հուշերին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև Պենդերեցկու ստեղծագործությունների մեջ հայոց հոգևոր երաժշտությանը առկա ոճային ընդհանրությունների ու երանգների մասին: Պրն Պենդերեցկին նաև հայկական հոգևոր երաժշտություն գրելու ցանկություն հայտնեց:

Վերջում մեծանուն կոմպոզիտորին Վեհափառ Հայրապետը ցանկացավ հաջողություններ ստեղծագործական կյանքում՝ մաղթելով, որ Սուրբ Էջմիածնի օրհնությունը միշտ ուղեկից լինի նրան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բուլղարիայի Հանրապետության դեսպան Տոդոր Ստայկովին:

Ողջունելով դեսպանի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները բերեց նորանշանակ դեսպանին: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունների սերտացման և երկու ժողովուրդների միջև բարեկամության առավել ամրապնդման առիթով:

Ի դեմս դեսպանի Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց Բուլղարիա-